## *ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ*

### *Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի և Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդի մարզի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին*

*Վայոց Ձորի մարզպետարանը (Հայաստանի Հանրապետություն) և Նիժեգորոդի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),*

*ուշադրության արժանացնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 2001 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների կառավարությունների և Հայաստանի Հանրապետության մարզերի միջև համագործակցության սկզբունքների մասին համաձայնագիրը,*

*հիմնվելով առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային փոխշահավետ երկկողմ կապերի ընդլայնման և փոխադարձ հետաքրքրվածության վրա,*

*Վայոց Ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Նիժեգորոդի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) կազմակերպությունների միջև շուկայական հարաբերությունների զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով ,*

*կարևորելով կազմակերպությունների միջև արտադրական և տեխնոլոգիական կապերի պահպանումը և զարգացումը,*

*համոզված լինելով, որ այս համագործակցությունը կստեղծի բարենպաստ պայմաններ Վայոց Ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Նիժեգորոդի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) միջև արտաքին տնտեսական կապերի զարգացման և խորացման համար, պայմանավորվեցին հետևյալի մասին.*

### *Հոդված 1*

*Կողմերն իրենց իրավասության սահմաններում իրականացնում են փոխշահավետ համագործակցություն տնտեսության, գիտության, մշակույթի, սպորտի և զբոսաշրջության ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:*

### *Հոդված 2*

*Կողմերն աջակցում են Վայոց Ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Նիժեգորոդի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) կազմակերպությունների պահանջարկին բավարարող մրցունակ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների և ծառայությունների մատակարարման վերաբերյալ պայմանագրերի կնքմանը և արտադրատնտեսական, առևտրային և այլ տեսակի համատեղ գործունեության համար փոխշահավետ պայմանների ապահովմանը:*

*Հոդված 3*

*Կողմերն իրենց իրավասության սահմաններում համագործակցում են հետևյալ ուղղություններով.*

*-առևտրատնտեսական առաջարկությունների, ծառայությունների առանձին տեսակների ցանկի և արտահանվող արտադրանքի, որոնք արտադրվում են Կողմերի տարածքում, փոխանակում*

*-համատեղ ներդրումային ծրագրերի մշակում,*

*-տնտեսական, վիճակագրական տեղեկատվության և հրապարակումների փոխանակում,*

*-ձեռնարկատիրական գործունեության, ֆոնդային շուկայի, հարկային քաղաքականության, և սոցիալ-իրավական պաշտպանության, բնակչության զբաղվածության ոլորտում առկա փորձի փոխանակում:*

*Հոդված 4*

*Կողմերը օժանդակում են ագրոարդյունաբերության ոլորտում համագործակցության զարգացմանը՝ գյուղատնտեսական տոնավաճառների, մասնագիտացված ցուցահանդեսների, գիտական համաժողովների և այլ գործնական կապերի միջոցով:*

*Հոդված 5*

*Կողմերը ստեղծում են պայմաններ մշակույթի, արվեստի, սպորտի, զբոսաշրջության ոլորտում հարաբերությունների ամրապնդման համար, ինչպես նաև աջակցում են գեղարվեստական ցուցահանդեսների, թատերահամերգային հյուրախաղերի, զբոսաշրջային և սպորտային պատվիրակությունների փոխադարձ այցելությունների կազմակերպմանը:*

*Հոդված 6*

*Կողմերը նպաստում են կրթության, գիտության և տեխնիկայի ոլորտում համագործակցության զարգացմանը՝ համատեղ գիտական միջոցառումների և ցուցահանդեսների անցկացմանը, համատեղ գիտահետազոտական, փորձակառուցողական և ծրագրային աշխատանքների կատարմանը, Վայոց Ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Նիժեգորոդի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) շահագրգիռ կազմակերպությունների միջև անմիջական համագործակցությանը:*

*Հոդված 7*

*Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնք ձևակերպվում են արձանագրությունների ձևով:*

*Հոդված 8*

*Սույն համաձայնագիրը չի շոշափում Կողմերի իրավունքներն ու պարտականություններն այլ պայմանագրով:*

*Հոդված 9*

*Սույն համաձայնագիրը հիմք է հանդիսանում Կողմերի կողմից կոնկրետ ոլորտներում համագործակցության արձանագրություններ կնքելու համար:*

*Սույն համաձայնագրի և նրա հիմքի վրա կնքված արձանագրությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացմանը և իրագործմանն աջակցելու, ինչպես նաև համագործակցության առանձին ոլորտներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման նպատակով կարող են անցկացվել երկկողմ բանակցություններ, ստեղծվել համատեղ հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր:*

*Հոդված 10*

*Սույն Համաձայնագրն ուժի մեջ է մտնում Նիժեգորոդի մարզի Կառավարության (Ռուսաստանի Դաշնություն) կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:*

*Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և համարվում է երկարաձգված ևս հինգ տարի ժամկետով, եթե կողմերից ոչ մեկը գրավոր չի հայտնում համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Գրավոր տեղեկացման դեպքում համաձայնագրի գործողությունը դադարում է այն ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:*

*Համաձայնագրի գործողության դադարումը չի ազդում դրան համապատասխան իրականացվող ծրագրերի և նախագծերի հետագա ընթացքի վրա, որոնց իրագործումը կշարունակվի համաձայնեցված պայմաններով:*

*Կնքվել է Երևան քաղաքում 19 ապրիլի 2011թ. հավասար իրավական ուժ ունեցող երկու օրինակից՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:*

| | |
|---|---|
| ***Վայոց Ձորի մարզպետարանի անունից*** | ***Նիժեգորոդի մարզի Կառավարության անունից*** |
| *Վայոց Ձորի մարզպետ* | *Նիժեգորոդի մարզի նահանգապետի տեղակալ, Կառավարության [illegible]* |
| *Ս. Պ. Բազրատյան* | *[illegible]. [illegible]ստկովսկի* |

**С О Г Л А Ш Е Н И Е**
**между Администрацией Вайоц Дзорской области (Республика Армения) и Правительством Нижегородской области (Российская Федерация) о торгово-экономическом, научно-техническом и культурном сотрудничестве**

Администрация Вайоц Дзорской области (Республика Армения) и Правительство Нижегородской области (Российская Федерация), далее именуемые Сторонами,

принимая во внимание положения Соглашения между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о принципах сотрудничества между администрациями (правительствами) субъектов Российской Федерации и областными администрациями Республики Армения от 15 сентября 2001 года,

основываясь на взаимной заинтересованности в расширении двусторонних торгово-экономических, научно-технических и культурных связей,

стремясь к созданию благоприятных условий для развития рыночных отношений между организациями Вайоц Дзорской области (Республика Армения) и Нижегородской области (Российская Федерация),

придавая важное значение сохранению и развитию производственных и технологических связей между организациями,

будучи убежденными в том, что такое сотрудничество создаст благоприятные условия для развития и углубления внешнеэкономических связей между Вайоц Дзорской областью (Республика Армения) и Нижегородской областью (Российская Федерация), согласились о нижеследующем:

**Статья 1**

Стороны в рамках своей компетенции осуществляют взаимовыгодное сотрудничество в области экономики, науки, культуры, спорта и туризма в соответствии с законодательством Республики Армения и Российской Федерации.

**Статья 2**

Стороны содействуют заключению договоров о поставках и производстве важнейших видов конкурентоспособной промышленной и сельскохозяйственной продукции и услуг, удовлетворяющих потребности организаций Вайоц Дзорской области (Республика Армения) и Нижегородской области (Российская Федерация), и обеспечению взаимовыгодных условий для совместной производственно-хозяйственной, коммерческой и иных видов деятельности.

**Статья 3**

Стороны в рамках своей компетенции, осуществляют сотрудничество по следующим направлениям:

- обмен торгово-экономическими предложениями, перечнями основных видов услуг и экспортной продукции, которые производятся на территории Вайоц Дзорской области (Республика Армения) и Нижегородской области (Российская Федерация);
- разработка совместных инвестиционных проектов;
- обмен экономической, статистической информацией и публикациями;
- обмен опытом по развитию предпринимательства, фондового рынка, налоговой политике, социально-правовой защите и занятости населения.

**Статья 4**

Стороны способствуют развитию сотрудничества в агропромышленной сфере: проведению сельскохозяйственных ярмарок, специализированных выставок, научных конференций и других деловых контактов.

**Статья 5**

Стороны создают условия для укрепления отношений в области культуры, искусства, спорта, туризма, а также содействуют обмену художественными выставками, театрально-концертными гастролями, туристическими и спортивными делегациями.

**Статья 6**

Стороны способствуют развитию сотрудничества в области образования, науки и техники, проведению совместных научных мероприятий и выставок, совместному выполнению научно-исследовательских, опытно-конструкторских и проектных работ, непосредственному сотрудничеству между заинтересованными организациями Вайоц Дзорской области (Республика Армения) и Нижегородской области (Российская Федерация).

**Статья 7**

Изменения и дополнения в настоящее Соглашение могут вноситься по обоюдному согласию Сторон и оформляются протоколами.

**Статья 8**

Настоящее Соглашение не затрагивает прав и обязательств Сторон по другим договорам.

**Статья 9**

Настоящее Соглашение является основой для заключения Сторонами протоколов в конкретных областях сотрудничества.

Для контроля и содействия в реализации настоящего Соглашения и заключенных на его основе протоколов, а также в целях реализации взаимных договоренностей в отдельных областях сотрудничества могут проводиться двусторонние переговоры, образовываться совместные комиссии и рабочие группы.

**Статья 10**

Настоящее Соглашение вступает в силу с даты последнего письменного уведомления Правительства Нижегородской области (Российская Федерация) о выполнении внутренних процедур, необходимых для его вступления в силу.

Соглашение заключается сроком на пять лет и автоматически продлевается на соответствующий пятилетний период, если ни одна из Сторон не уведомит письменно другую Сторону о своем намерении прекратить его действие. В этом случае его действие прекращается по истечении шести месяцев со дня получения такого уведомления.

Прекращение действия настоящего Соглашения не влияет на осуществление программ и проектов, реализуемых в соответствии с настоящим Соглашением, реализация которых будет продолжена на согласованных условиях.

Совершено в городе Ереван <<19>> апреля 2011 г. в двух экземплярах, каждый на русском и армянском языках, причем оба текста имеют одинаковую силу.

За Администрацию
Вайоц Дзорской области
(Республика Армения)

Губернатор
Вайоц Дзорской
области

С.П.Багратян

За Правительство
Нижегородской области
(Российская Федерация)

Заместитель Губернатора,
заместитель Председателя
Правительства
Нижегородской области

Д.В.Сватковский